

## Փքանք (ՏԻՄՊԱՆԻԱ)

**Հիվանդության բնորոշումը.** Հիվանդությունը ընթանում է կտրիչում գազերի արագ կուտակումներով և կենդանու ձախ կողմի փքվելով:

**Պատճառը.** Փքանքի պատճառներն են շուտ խմորվող, հյութալի կանաչ կերերը, առվույտի, վիկի, երեքնուկի ցանքատարածությունները, արմատապալարապտուղները (կարտոֆիլ, ճակնդեղ, գոնգեղ, գազար և այլն) հատկապես խոնավ և բորբոսնած վիճակում, թունավոր բույսերը:

**Կլինիկական նշանները.** Հիվանդությունը սկսվում է անհանգստության նշաններով: Կենդանին հրաժարվում է կեր ընդունելուց, թափահարում է պոչը, նայում է փորին, տնքում է, պատկում և շտապ վեր կենում, ոտքով խփում է փորին: Ջերմաստիճանը չի բարձրանում, շնչառությունը արագանում է, որովայնը ծավալով մեծանում է, նկատվում է ձախ սովափոսի արտափքում: Չմիջամտելու դեպքում կենդանին սատկում է շնչահեղձությունից, սրտի կանգից:

**Կանխարգելումը.** Փքանքի կանխարգելման համար անհրաժեշտ է, որ անասնապահները ծանոթ լինեն կենդանիների կերակրման և խնամքի կանոններին:

**Բուժումը.** Կենդանու մոտ վերոնշյալ կլինիկական նշանները հայտնաբերելու դեպքում **անհապաղ դիմեք անասնաբույժին:** Բայց մինչև անասնաբույժի ժամանելը, Դուք կարողեք կատարել հետևյալ գործողությունները.

### ԽՈՐՀՈՒՐԴ

- Նախ հիվանդ կենդանուն կանգնեցրեք այնպես, որ մարմնի առջևի մասը լինի բարձր: Դա արվում է նրա համար, որպեսզի թոքերը ազատվեն ճնշումից:
- Բերանն անընդհատ շարժելու՝ որոճ և բիկոց առաջացնելու համար, կարելի է բերանի խոռոչում դնել ուռենու կամ այլ ծառի փափուկ ճյուղ՝ փաթաթած իխթիոլով պատած շորով:
- Ձախ սովափոսը մերսեք 10-15 րոպե պտուտակաձև շարժումներով՝ ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ:
- Կենդանուն լողացրեք սառը ջրով կամ ձախ սովափոսի հատվածում դրեք սառը թրջոց:
- Կենդանու կտրիչում առաջացած գազերի կլանման համար տվեք թարմ կաթ՝ 2-3 լիտր, փայտածուխ, անուշադրի սպիրտ՝ 10-20 գրամ, 500 մլ ջրի մեջ: Լավ արդյունք է տալիս տիմպանոլ պրեպարատը, որը տալիս են բերանով ռետինե շերտով, 0.4-0.5 մլ/կգ դոզայով, լուծում են ջրում 1:10 -1:15 հարաբերությամբ: Կարողեք նույն ձևով խմեցնել չեմերիցա՝ 20 մլ –ը բացելով 2լ ջրում:
- Երբ բոլոր վերը նշված քայլերը ոչ մի արդյունք չեն տալիս, և կենդանու դրությունը չի լավանում, ապա տրոսկարով կամ դանակով ծակում են ձախ սովափոսի կենտրոնից, մատով փակելով տրոսկարի կամ դանակի բացած անցքը, որպեսզի գազերը դուրս գան աստիճանաբար, հակառակ դեպքում կենդանին կսատկի: Տրոսկարի կամ դանակի բացած անցքը ինքն իրեն ժամանակի ընթացքում փակվում է: